3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է

(_____ տառերով _____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն¹⁵:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում սույն պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունած Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների դիմաց վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

¹⁵ Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև վճարումները իրականացնելու նպատակով կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով¹⁶:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին¹⁷:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից

¹⁶ Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

¹⁷ Եթե գնման առարկան չեն հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները, ապա սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից:

ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում¹⁸:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները¹⁹:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի

¹⁸ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

¹⁹ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համարեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:²⁰

7.16 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է **Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

(ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն)

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

²⁰ Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը» բառերը փոխարինելով «և» բառով:

Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 1-ին չափաբաժին

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանների կանաչ տարածքների խնամք և պահպանումը

Իրականացվում է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանների կանաչ տարածքների խնամք և պահպանումը՝ Սիզամարգերի խնամք մաքրում թափված տերևներից, չորուկներից և աղբից, Ոռոգում ջրող, ավտոմեքենայով և ռետինե խողովակով Պատահական աղբի հավաքում, Քաղհան, փխրեցում, Կոմբինացված սիզամարգերի հունձ սիզաքաղ մեքենայով, Սիզամարգերի հունձ ձեռքով և խոտի հավաքում, Խոտի հավաքում սիզամարգերից, Աղբի և մոլախոտի բարձում ավտոմեքենա, տեղափոխում և բեռնաթափում, Հանքային պարարտանյութերով համատարած պարարտացում մինչև 2 ցենտներ 1 հա նորմայի դեպքում, կիսաչոր օրգանական պարարտանյութով, համատարած պարարտացում 1 տոննա-1 հա նորմայի դեպքում, Ճիմի և բնահողի հանում 25սմ խորությամբ, Քանդված ոչ պիտանի հողի բարձում ավտոմեքենայով և տեղափոխում 12կմ. Կույտերից բուսական հողի ցրում 15սմ. շերտով, հողի հարթեցում փոցխով մանրացնելով կույտերը, հավաքելով քարերը և արմատները, բնահողի նախապատրաստում ձեռքով սիզամարգի իրականացման համար, Սիզամարգերի ցանքս ձեռքով մատուցելով սերմերը, փոցխով խառնելով հողի հետ և հողի վերին շերտի ամրացում ջրով, Մակերեսի հարթեցում Ճմապատման համար, Ճմի կտրում, բարձում տեղափոխում, Ճմապատում, Ծաղկաթմբերի և ծաղկային տարածքների ստեղծում 2-րդ կարգի բնահողում, Բահափոր 16-20սմ. խորությամբ շրջերով հողի շերտը, խոշոր կոշտերի մանրացումով, Հողի հարթեցում փոցխով մանրացնելով կոշտերը հավաքելով քարերը և արմատները, գծանշում ծաղիկների տնկման համար, Փոսերի պատրաստում 0.2մ. տրամագծով և 0.1մ. խորությամբ միամյա և բազմամյա ծաղիկների տնկման համար, Մինչև 0.02 խմ. ծաղկասածիլներով արկղերի դատարկում, Պալարատխուկային ծաղկասածիլների տնկում հողագնդով 2-րդ խմբի բնահողում 7 հատ 1քմ. վրա առաջին անգամ ջրելով և 30 հատ 1 ք.մ. վրա առաջին անգամ ջրելով, Վարդակակաչների, թրաշուշանների տնկում փոսիկներում, կամ ակոսներում (80 հատ 192), Ծաղկային ձևավորում, /ծաղիկների խնամք/ ռետինե խողովակով ծաղիկների ջրում ոռոգման ցանցից, Զրող ավտոմեքենայով ծաղիկների ջրում, Ծաղիկների քաղհան միջին աղտոտվածության դեպքում, փխրեցնելով հողը հողուրագով, Սնուցում չոր հանքային պարարտանյութերով, Ծաղիկների բուժում թունաքիմիկատներով ձեռքի սրսկիչով, Չորացած ծաղիկների ցողունների հավաքում և ծաղկանոցից դուրս հանում, Ծաղկային գեղարվեստական ձևավորում, կոմպոզիցիաների ստեղծում, Ծաղկային տարածքների եզրերի ձևավորում մարմարե խճաքարերով, Միաշարք կենդանի ցանկապատի ստեղծում և խնամք /խրամուղու փորում, փոցխում, հողի լցում, ջրում, Բնառվակների պատրաստում, Թաղարային և և գորգային ծաղիկների հանում, Վարդակակաչների, կակաչների, սոխուկների հանում, Ձևավորում, Թփերի տնկման համար հողի փորում, տնկում հողով ամրացնելով արմատները, Ծառերի տնկում և խնամք /կլոր փոսերի փորում, տնկում, հողագնդով և առանց հողագնդի ամրացնելով արմատները, Ծառերի տնկման համար նախատեսված ճաղավանդակների, ինչպես նաև բնական և արհեստական նյութերով կոմպոզիցիաների պատրաստում, Ձեռքով խրամուղիների փորում միաշարք (թփեր) կենդանի ցանկապատ ստեղծելու համար. Բնաբաժակների ստեղծում, Ծառերի և թփերի բնաբաժակների քաղհան փխրեցումով, Ծառերի և թփերի չորուկներից և կոճղաշվերի կտրում, ձևավորում, երիտասարդացում, Գոյացած փայտակույտի բարցում, տեղափոխում, պահեստավորում, Կրապատում, Ծառերի հատում, Հատումից առաջացած փայտի մանրացում, Ծառերի բուժում թունաքիմիկատներով, Ծառերի ջրում ավտոմեքենայով և ինքնահոս եղանակով, Ոռոգման ցանցի և պոմպակայանների ընթացիկ սպասարկում, վերանորոգում և ցանցի անցկացում, Ոռոգման ցանցի խողովակների ներկում, Նախկինում գոյություն ունեցող չգործող ոռոգման ցանցի առանձին հատվածների վերագործարկում, Ձյուն թափ տալ ծառերի ճյուղերից, Անցուղիների, հրապարակների, աստիճանավանդակների մաքրում ձյունից :Սպասարկվող ընդհանուր տարածքը կազմում է 22.0 հա, որից՝ սիզամարգ 11.7հա, ծաղկային տարածք 1.0հա, 6592 հատ ծառ՝ 4.6հա, 1450 հատ թուփ՝ 0.7հա:

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համաձայնագրի կնքման օրվանից	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում 2019 թ դեկտեմբերի 25-ը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2-րդ չափաբաժին

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի կանաչ տարածքների խնամք և պահպանումը՝

Իրականացվում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի կանաչ տարածքների խնամք և պահպանումը՝

- Սիզամարգերի խնամք մաքրում թափված տերևներից, չորուկներից և աղբից,
- Ոռոգում ջրող, ավտոմեքենայով և ռետինե խողովակով,
- Պատահական աղբի հավաքում,
- Քաղհան, փխրեցում
- Կոմբինացված սիզամարգերի հունձ սիզաքաղ մեքենայով,
- Սիզամարգերի հունձ ձեռքով և խոտի հավաքում,
- Խոտի հավաքում սիզամարգերից,
- Աղբի և մոլախոտի բարձում ավտոմեքենա, տեղափոխում և բեռնաթափում,
- Հանքային պարարտանյութերով համատարած պարարտացում մինչև 2 ցենտներ 1 հա նորմայի դեպքում, կիսաչոր օրգանական պարարտանյութով, համատարած պարարտացում 1 տոննա-1 հա նորմայի դեպքում,
- Ճիւրի և բնահողի հանում 25սմ խորությամբ,
- Քանդված ոչ պիտանի հողի բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում 12կմ.
- Կույտերից բուսական հողի ցրում 15սմ. շերտով, հողի հարթեցում փոցխով մանրացնելով կույտերը, հավաքելով քարերը և արմատները, բնահողի նախապատրաստում ձեռքով սիզամարգի իրականացման համար,
- Սիզամարգերի ցանք ձեռքով մատուցելով սերմերը, փոցխով խառնելով հողի հետ և հողի վերին շերտի ամրացում ջրով,
- Սակերեսի հարթեցում ճնապատման համար
- Ճմի կտրում, բարձում տեղափոխում,
- Ճնապատում,
- Շաղկաթմբերի և ծաղկային տարածքների ստեղծում 2-րդ կարգի բնահողում,
- Բահափոր 16-20սմ. խորությամբ շրջերով հողի շերտը, խոշոր կոշտերի մանրացումով,
- Հողի հարթեցում փոցխով մանրացնելով կոշտերը հավաքելով քարերը և արմատները, գծանշում ծաղիկների տնկման համար,
- Փոսերի պատրաստում 0.2մ. տրամագծով և 0.1մ. խորությամբ միամյա և բազմամյա ծաղիկների տնկման համար,

Մինչև 0.02 խմ. ծաղկասածիլներով արկղերի դատարկում,

- Պալարատխուկային ծաղկասածիլների տնկում հողագնդով 2-րդ խմբի բնահողում 7 հատ 1քմ. վրա առաջին անգամ ջրելով և 30 հատ 1 քմ. վրա առաջին անգամ ջրելով,
- Վարդակակաչների, թրաշուշանների տնկում փոսիկներում, կամ ակոսներում (80 հատ 192)
- Շաղկային ձևավորում, /ծաղիկների խնամք/ ռետինե խողովակով ծաղիկների ջրում ոռոգման ցանցից,
- Ջրող ավտոմեքենայով ծաղիկների ջրում,
- Շաղիկների քաղհան միջին աղտոտվածության դեպքում, փխրեցնելով հողը հողուրագով,
- Մտուցում չոր հանքային պարարտանյութերով,
- Շաղիկների բուծում թունաքիմիկատներով ձեռքի սրսկիչով,
- Չորացած ծաղիկների ցողունների հավաքում և ծաղկանոցից դուրս հանում,
- Շաղկային գեղարվեստական ձևավորում, կոմպոզիցիաների ստեղծում
- Շաղկային տարածքների եզրերի ձևավորում մարմարե խճաքարերով,
- Միաշարք կենդանի ցանկապատի ստեղծում և խնամք /խրամուղու փորում, փոցխում, հողի լցում, ջրում,
- Բնաովակների պատրաստում,
- Թաղարային և և գորգային ծաղիկների հանում,
- Վարդակակաչների, կակաչների, սոխուկների հանում,
- Ձևավորում,
- Թփերի տնկման համար հողի փորում, տնկում հողով ամրացնելով արմատները,
- Շառերի տնկում և խնամք /կլոր փոսերի փորում, տնկում, հողագնդով և առանց հողագնդի ամրացնելով արմատները,
- Շառերի տնկման համար նախատեսված ճաղավանդակների, ինչպես նաև բնական և արհեստական նյութերով կոմպոզիցիաների պատրաստում,
- Ձեռքով խրամուղուների փորում միաշարք (թփեր) կենդանի ցանկապատ ստեղծելու համար.
- Բնաբաժակների ստեղծում,

- Ծառերի և թփերի բնաբաժակների քաղհան փխրեցումով,
 - Ծառերի և թփերի չորուկներից և կոճղաշվերի կտրում, ձևավորում, երիտասարդացում,
 - Գոյացած փայտակույտի բարցում, տեղափոխում, պահեստավորում,
 - Կրապատում,
 - Ծառերի հատում,
 - Հատումից առաջացած փայտի մանրացում,
 - Ծառերի բուժում թունաքիմիկատներով,
 - Ծառերի ջրում ավտոմեքենայով և ինքնահոս եղանակով,
 - Ոռոգման ցանցի և պոմպակայանների ընթացիկ սպասարկում, վերանորոգում և ցանցի անցկացում,
 - Ոռոգման ցանցի խողովակների ներկում,
 - Նախկինում գոյություն ունեցող չգործող ոռոգման ցանցի առանձին հատվածների վերագործարկում,
 - Չյուն թափ տալ ծառերի ճյուղերից,
 - Անցուղիների, հրապարակների, աստիճանավանդակների մաքրում ձյունից :
- Սպասարկվող ընդհանուր տարածքը կազմում է 52 հա, որից՝ 7,1 հա սիզամարգ, 0,74 հա ծաղկային տարածք, 6,8 հա պուրակներ, 55 հազ. հատ ծառ, 21 հազ. հատ թուփ:

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համաձայնագրի կնքման օրվանից	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում 2019 թ դեկտեմբերի 25-ը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 3-րդ չափաբաժին

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի կանաչ տարածքների խնամք և պահպանումը՝

- Իրականացվում է Երևան քաղաքի վարչական շրջանի կանաչ տարածքների խնամք և պահպանում՝
- Սիզամարգերի մաքրում թափված տերևներից, չորուկներից և աղբից՝ $4 \cdot 10 \text{ամիս} = 40 \cdot 75000 = 3000000 \text{քմ}$,
- Սիզամարգերի ոռոգումը մինչև 40մ երկարությամբ ռետինե խողովակով՝ $75000 \cdot 60 = 4500000 \text{քմ}$
- Պատահական աղբի հավաքում՝ $4 \cdot 10 \text{ամիս} = 40 \cdot 50000 = 20000000 \text{քմ}$,
- Սիզամարգերի քաղհան, փխրեցում՝ $75000 \cdot 3 = 225000 \text{քմ}$
- Կոմբինացված սիզամարգերի հունձ սիզաքաղ մեքենայով՝ $5 \cdot 6 \text{ամիս} = 30 \cdot 75000 = 2250000 \text{քմ}$,
- Սիզամարգերի հունձ ձեռքով և խոտի հավաքում,
- Սիզաքաղով հնձված խոտի հավաքում սիզամարգերից՝ $100 \text{քմ} \cdot 0.2 = 20 \text{քմ} \cdot 30 = 600 / 100 = 6 \cdot 75000 = 450000 \text{քմ}$,
- Ճիմի և բնահողի հանում 25սմ խորությամբ,
- Քանդված ոչ պիտանի հողի բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում 12կմ՝ $440 \cdot 1,4 = 616 \text{տ}$.
- Կույտերից բուսական հողի ցրում և դզում 15սմ. Շերտով՝ 10000քմ
- Հողի հարթեցում փոցխով մանրացնելով կույտերը, հավաքելով քարերը և արմատները, բնահողի նախապատրաստում ձեռքով սիզամարգի իրականացման համար՝ 10000քմ,
- Սիզամարգերի ցանքա ձեռքով մատուցելով սերմերը, փոցխով խառնելով հողի հետ և հողի վերին շերտի ամրացում ջրով՝ 10000քմ,
- Կանաչ տարածքներից մացառների մաքրում ձեռքով՝ 5000քմ,
- Բահափոր 16-20սմ խորությամբ շրջելով հողի շերտը, խոշոր կոշտերի մանրացումով՝ 5000քմ
- Հողի հարթեցում փոցխով մանրացնելով կոշտերը, հավաքելով քարերը և արմատները՝ 5000քմ
- Փոսերի պատրաստում 0.2մ. տրամագծով և 0.1մ. խորությամբ միամյա և բազմամյա ծաղիկների տնկման համար՝ 150000 հատ (5000քմ),
- Մինչև 0.02 խմ. ծաղկասածիլներով արկղերի դատարկում՝ 4500 արկղ,
- Պալարատխուկային ծաղկասածիլների տնկում հողագնդով 2-րդ խմբի բնահողում 7 հատ 1քմ. վրա առաջին անգամ ջրելով և 30 հատ 1 ք.մ. վրա առաջին անգամ ջրելով՝ 150000 հատ (5000քմ),
- Մինչև 0,02խմ ծաղկասածիլներով արկղերի դատարկում՝ 4500 արկղ,
- Մինչև 40մ երկարությամբ ռետինե խողովակով ծաղիկների ջրում ոռոգման ցանցից՝ $10 \cdot 6 + 60 \cdot 5000 = 300000 \text{քմ}$,

- Ծաղիկների քաղհան միջին աղտոտվածության դեպքում, փխրեցնելով հողը հողուրագով 4*5 ամիս=20*5000=100000քմ,
- Ծաղիկների սնուցում չոր հանքային պարարտանյութերով, այն հողուրագով մտցնելով հողի մեջ 4*5000=20000 քմ,
- Չորացած ծաղիկների ցողունների հավաքում և ծաղկանոցից դուրս հանում՝ 4*5000=20000քմ,
- Վարդակակաչների, թրաշուշանների տնկում փոսիկներում, կամ ակոսներում (80 հատ 1քմ վրա)՝ 60000հատ 750քմ,
- Վարդակակաչների և նարգեսների տխուկների հանում 60000 հատ,
- 50*50ամ չափերի բնաբաժակների փորում (վարդանոցների հիմնում)՝ 4000 հատ,
- Վարդերի թփերի տնկում բնանաժակներում՝ 4000հատ,
- Վարդերի էտ՝ 4000 հատ,
- Խրամուղու փորում ձեռքով և թփերի տնկում կենդանի ցանկապատ ստեղծելու համար. 200գմ,
- Կենդանի ցանկապատի խուզում ձեռքով՝ 1գծ/մ+2.1քմ, 5*5ամիս + 25*400գծ/մ=10000*2.1=21000քմ,
- Բնաովակների պատրաստում կենդանի ոռոգելու համար 1գծ/մ=2.1քմ*400գծ/մ=840*5=4200քմ,
- Ոռոգման ցանցից ռետինե խողովակով կենդանի ցանկապատի ոռոգում 60*840= 50400քմ,
- Կլոր փոսերի փորում 2-րդ խմբի բնահողում 0,5*0,4մ չափերի ծառերի տնկման համար ավելացնելով 50% բուսահող՝ 2400փոս,
- Ծառերի տնկում և խնամք /կլոր փոսերի փորում, տնկում, հողագնդով և առանց հողագնդի ամրացնելով արմատները՝ 2400ծառ,
- Ծառերի և թփերի բնաբաժակների քաղհան փխրեցումով՝ 300*1=300քմ*5=1500քմ,,
- Ծառերի և թփերի չորուկներից և կոճղաշվերի կտրում, ձևավորում, երիտասարդացում՝ 50000ճյուղ,
- Ծառերի Կրապատում՝ 17000ծառ,
- Ծառերի ձևավորում մինչև 30սմ բնի հաստությամբ՝ 800ծառ
- Ծառերի ձևավորում 30սմ-ից ավել բնի հաստությամբ՝ 300ծառ,
- Հիվանդ չոր կամ վթարային ծառի կամ մեկ ձևի հեռացում՝ 200թև,
- Հատումից առաջացած փայտի մանրացում,
- Ծառերի բուծում թունաքիմիկատներով՝ 1 հա 400 ծառ՝ 5000 ծառ,
- Զբոսայգու համատարած ոռոգում ինքնահոս եղանակով՝ 41000*4*6ամիս=984000 քմ,
- Զբոսայգու ճանապարհների և հրապարակների մաքրում 15000*8*10=1200000քմ,
- Զբոսայգու ճանապարհների, հրապարակների ինչպես նաև եզրաքարերի մաքրում մոլախոտից՝ 2700քմ,
- Զբոսայգու ճանապարհների և հրապարակների մաքրում ձյունից ձեռքով 15200*12=180000 քմ,
- Աղբի և մոլախոտերի բարձում ավտոմեքենայով՝ 960տ,
- Աղբի և մոլախոտերի բեռնաթափում՝ 960տ,
- Չյան թափ տալ ծառերի ճյուղերից՝ 3000 ծառ,
- Խողովակների յուղաներկում 2 անգամ՝ 600քմ,
- Մետաղալարե խողովակների մոնտաժում՝ 200գծ/մ,
- Փականների փոխում 15-20մմ՝ 150հատ,
- Մետաղալարաստմասե խողովակների մոնտաժում և վերանորոգում՝ 500գծ/մ,
- Զրող ավտոմեքենայով ծառերի ջրում՝ 10000հատ,
- Զրող ավտոմեքենայով ծաղիկների ջրում՝ 15000քմ,
- Զրող ավտոմեքենայով սիզամարգերի ջրում՝ 25000քմ:

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համաձայնագրի կնքման օրվանից	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում 2019 թ դեկտեմբերի 25-ը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

4-րդ չափաբաժին

Իրականացվում է Երևան քաղաքի Նուբարաշեն վարձական շրջանի կանաչ տարածքների խնամք և պահպանումը՝

-Սիզամարգերի խնամք, մաքրում թափված տերևներից, չորուկներից և աղբից

- Ոռոգում ջրող ավտոմեքենայով և ռետինե խողովակով
- Պատահական աղբի հավաքում
- Քաղհան, փխրեցում
- Կոմբինացված սիզամարգերի հունձ սիզաքաղ մեքենայով
- Միզամարգերի հունձ ձեռքերով և խոտի հավաքում
- Աղբի և մոլախոտերի բարձում ավտոմեքենա, տեղափոխում և բեռնաթափում
- Հանքային պարարտանյութերով համատարած պարարտացում մինչև 2 ցենտներ 1 հա նորմայի դեպքում, կիսաչոր օրգանական պարարտանյութով, համատարած պարարտացում 1 տոննա 1 հա նորմայի դեպքում
- Ճիմի և բնահողի հանում 25 սմ խորությամբ
- Քանդված ոչ պիտանի հողի բարձում ավտոմեքենայով և տեղափոխում 6 կմ
- Կույտերից բուսական հողի ցրում 15 սմ շերտով, հողի հարթեցում փոցխով մանրացնելով կույտերը, հավաքելով քարերը և արմատները, բնահողի նախապատրաստում ձեռքով սիզամարգի իրականացման համար
- Միզամանգերի ցանքս ձեռքով մատուցելով սերմերը, փոցխով խառնելով հողի հետ և հողի վերին շերտի ամրացում ջրով
- Մակերեսի հարթեցում ճնապատման համար
- Ճմի կտրում, բարձում տեղափոխում
- Ճնապատում
- Ծաղկաթմբերի և ծաղկային տարածքների ստեղծում երկրորդ կարգի բնահողում
- Բահավոր 16-20 սմ խորությամբ շրջելով հողի շերտը, խոշոր կոշտերի մանրացումով
- Հողի հարթեցում փոցխով մանրացնելով կոշտերը, հավաքելով քարերը և արմատները, գծանշում ծաղիկների տնկման համար
- Փոսերի պատրաստում 0,2մ տրամագծով և 0,1մ խորությամբ, միամյա և բազմամյա ծաղիկների տնկման համար
- Պալարատխուկային ծաղկասացիլների տնկում հողագնդով 2-րդ խմբի բնահողում 7 հատ 1քմ վրա առաջին անգամ ջրելով և 30 հատ 1քմ վրա առաջին անգամ ջրելով
- Վարդակակաչների տնկում փոսիկներում կամ ակոսներում 250-300 հատ
- Ծաղկային ձևավորում /ծաղիկների խնամք/ ռետինե խողովակով ծաղիկների ջրում ոռոգման ցանցից
- Ջրող ավտոմեքենայով ծաղիկների ջրում
- Ծաղիկների քաղհան միջին աղտոտվածության դեպքում, փխրեցնելով հողը հողուրագով
- Մուցում չոր հանքային պարարտանյութերով
- Ծաղիկների բուժում թունաքիմիկատներով ձեռքի սրակիչով
- Չորացած ծաղիկների ցողունների հավաքագրում և ծաղկանոցից դուրս հանում
- Ծաղկամանների ձեռք բերում (100-150 հատ)
- Սևահող (27-30մ³)
- Կոմպոզիցիաների և նոր ծաղիկների ձեռքբերում
- Ծաղկային ձևավորում, կենտրոնական փողոցով
- Ծաղկային տարածքների եզրերի ձևավորում մարմարե խճաքերով (200-300 մ²)
- Միաշարք կենդանի ցանկապատի ստեղծում և խնամք /խրամուղու փորում, փոցխում, հողի լցում, ջրում/ (700-1000մ)
- Բնաովակների պատրաստում
- Թաղարային և գորգային ծաղիկների հանում
- Վարդակակաչների, կակաչների, սոխուկների հանում
- Ձևավորում կանաչ տարածքների
- Ծառերի տնկում և խնամք /կլոր փոսերի փորում, տնկում, հողագնդով և առանց հողագնդի ամրացնելով արմատները/
- Ծառերի տնկման համար նախատեսված ճաղավանդակների պատրաստում, ինչպես նաև ձեռքով խրամուղների փորում մի շարք /թփեր/ կենդանի ցանկապատ ստեղծելու համար
- Ծառերի և թփերի բնաբաժակների քաղհան փխրեցումով
- Ծառերի և թփերի չորուկներից և կոճղաշվերի կտրում, ձևավորում, երիտասարդացում
- Գոյացած փայտակույտի բարձում, տեղափոխում, պահեստավորում

- Կրապատում ` 3700-4000 ծառ
 - Ծառերի հատում
 - Հատումից առաջացած փայտի մանրացում
 - Ծառերի բուժում թունաքիմիկատներով
 - Ծառերի ջրում ավտոմեքենայով և ինքնահոս եղանակով
 - Ոռոգման ցանցի և պոմպակայանների ընթացիկ սպասարկում, վերանորոգում
 - Ոռոգման ցանցի խողովակների ներկում
 - Նախկինում գոյություն ունեցող չգործող ոռոգման ցանցի առանձին հատվածների վերագործարքում
 - Չյուն թափ տալ ծառերի ճյուղերից
 - Անցուղիների, հրապարակների, աստիճանավանդակների, գրուցարանների և այգիների նստարանների մաքրում ձյունից
 - Կենտրոնական այգու ընթացիկ սպասարկում
- Սպասարկվող ընդհանուր տարածքը կազմում է 5 հա, որից` 0,1 հա սիզամարգ, 0,08 հա ծաղկային տարածք, 4000 ծառ, 1200 թուփ և այլն:

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համաձայնագրի կնքման օրվանից	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում 2019 թ դեկտեմբերի 25-ը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

5-րդ չափաբաժին

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի 2019թ. կանաչապարտադրանքների խնամքի և պահպանման աշխատանքների

Իրականացվում է Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի կանաչ տարածքների խնամք և պահպանումը`

- Սիզամարգերի խնամք մաքրում թափված տերևներից, չորուկներից և աղբից,
- Ոռոգում ջրող ավտոմեքենայով և ռետինե խողովակով,
- Պատահական աղբի հավաքում,
- Քաղհան, փխրեցում
- Կոմբինացված սիզամարգերի հունձ սիզաքաղ մեքենայով,
- Սիզամարգերի հունձ ձեռքով և խոտի հավաքում,
- Խոտի հավաքում սիզամարգերից,
- Աղբի և մոլախոտի բարձում ավտոմեքենա, տեղափոխում և բեռնաթափում,
- Հանքային պարարտանյութերով համատարած պարարտացում մինչև 2 ցենտներ 1 հա նորմայի դեպքում, կիսաչոր օրգանական պարարտանյութով, համատարած պարարտացում 1 տոննա-1 հա նորմայի դեպքում,
- Ճիմի և բնահողի հանում 25սմ խորությամբ,
- Քանդված ոչ պլիտանի հողի բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում 12կմ.
- Կույտերից բուսական հողի ցրում 15սմ. շերտով, հողի հարթեցում փոցխով մանրացնելով կույտերը, հավաքելով քարերը և արմատները, բնահողի նախապատրաստում ձեռքով սիզամարգի իրականացման համար,
- Սիզամարգերի ցանքս ձեռքով մատուցելով սերմերը, փոցխով խառնելով հողի հետ և հողի վերին շերտի ամրացում ջրով,
- Մակերեսի հարթեցում ճնապատման համար

-Ճմի կտրում, բարձում տեղափոխում,

-Ճնապատում,

-Օաղկաթմբերի և ծաղկային տարածքների ստեղծում 2-րդ կարգի բնահողում,

-Բահավոր 16-20սմ. խորությամբ շրջերով հողի շերտը, խոշոր կոշտերի մանրացումով,

-Հողի հարթեցում փոցխով մանրացնելով կոշտերը հավաքելով քարերը և արմատները, գծանշում ծաղիկների տնկման համար,

-Փոսերի պատրաստում 0.2մ. տրամագծով և 0.1մ. խորությամբ միամյա և բազմամյա ծաղիկների տնկման համար,

-Մինչև 0.02 խմ. ծաղկասածիլներով արկղերի դատարկում,

-Պալարատիկային ծաղկասածիլների տնկում հողագնդով 2-րդ խմբի բնահողում 7 հատ 1քմ. վրա առաջին անգամ ջրելով և 30 հատ 1 քմ. վրա առաջին անգամ ջրելով,

-Վարդակակաչների, թրաշուշանների տնկում փոսիկներում, կամ ակոսներում (80 հատ 192)

-Օաղկային ձևավորում, /ծաղիկների խնամք/ ռետինե խողովակով ծաղիկների ջրում ոռոգման ցանցից,

-Ջրող ավտոմեքենայով ծաղիկների ջրում,

-Օաղիկների քաղհան միջին աղտոտվածության դեպքում, փխրեցնելով հողը հողուրագով,

-Մնուցում չոր հանքային պարարտանյութերով,

-Օաղիկների բուժում թունաքիմիկատներով ձեռքի սրսկիչով,

-Չորացած ծաղիկների ցողունների հավաքում և ծաղկանոցից դուրս հանում,

-Օաղկային գեղարվեստական ձևավորում, կոմպոզիցիաների ստեղծում

-Օաղկային տարածքների եզրերի ձևավորում մարմարե խճաքարերով,

-Միաշարք կենդանի ցանկապատի ստեղծում և խնամք /խրամուղու փորում, փոցխում, հողի լցում, ջրում,

-Բնառվակների պատրաստում,

-Թաղարային և և գորգային ծաղիկների հանում,

-Վարդակակաչների, կակաչների, սոխուկների հանում,

-Ձևավորում,

-Թփերի տնկման համար հողի փորում, տնկում հողով ամրացնելով արմատները,

-Օառների տնկում և խնամք /կլոր փոսերի փորում, տնկում, հողագնդով և առանց հողագնդի ամրացնելով արմատները,

-Օառների տնկման համար նախատեսված ճաղավանդակների, ինչպես նաև բնական և արհեստական նյութերով կոմպոզիցիաների պատրաստում,

Ձեռքով խրամուղիների փորում միաշարք (թփեր) կենդանի ցանկապատ ստեղծելու համար.

-Բնաբաժակների ստեղծում,

-Օառների և թփերի բնաբաժակների քաղհան փխրեցումով,

-Օառների և թփերի չորուկներից և կոճղաշվերի կտրում, ձևավորում, երիտասարդացում,

-Գոյացած փայտակույտի բարցում, տեղափոխում, պահեստավորում,

-Կրապատում,

-Օառների հատում,

-Հատումից առաջացած փայտի մանրացում,

-Օառների բուժում թունաքիմիկատներով,

-Օառների ջրում ավտոմեքենայով և ինքնահոս եղանակով,

-Ոռոգման ցանցի և պոմպակայանների ընթացիկ սպասարկում, վերանորոգում և ցանցի անցկացում,

-Ոռոգման ցանցի խողովակների ներկում,

-Նախկինում գոյություն ունեցող չգործող ոռոգման ցանցի առանձին հատվածների վերագործարկում,

-Չյուն թափ տալ ծառերի ճյուղերից,

-Անցուղիների, հրապարակների, աստիճանավանդակների մաքրում ձյունից, խաղահրապարակների մաքրում տարվա բոլոր եղանակների:

Սպասարկվող ընդհանուր տարածքը կազմում է 1.5 հա սիզամարգ, 0.08 հա ծաղկային տարածք, 750 ծառ, 480 թուփ, և այլն:

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համաձայնագրի կնքման օրվանից	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում 2019 թ դեկտեմբերի 25-ը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 6-րդ չափաբաժին

Երևան քաղաքի ԴՊՄԻ ՌՃՄ ԻՅՌՃԻՅՄ շրջանի կանաչ տարածքների խնամք և պահպանումը՝

- Սիզամարգերի խնամք մաքրում թափված տերևներից, չորուկներից և աղբից,
- Ոռոգում ջրող, ավտոմեքենայով և ռետինե խողովակով,
- Պատահական աղբի հավաքում,
- Քաղհան, փխրեցում
- Կոմբինացված սիզամարգերի հունձ սիզաքաղ մեքենայով,
- Սիզամարգերի հունձ ձեռքով և խոտի հավաքում,
- Խոտի հավաքում սիզամարգերից,
- Աղբի և մոլախոտի բարձում ավտոմեքենա, տեղափոխում և բեռնաթափում,
- Հանքային պարարտանյութերով համատարած պարարտացում մինչև 2 ցենտներ 1 հա նորմայի դեպքում, կիսաչոր օրգանական պարարտանյութով, համատարած պարարտացում 1 տոննա-1 հա նորմայի դեպքում,
- Ճիմի և բնահողի հանում 25սմ խորությամբ,
- Քանդված ոչ պիտանի հողի բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում 12կմ.
- Կույտերից բուսական հողի ցրում 15սմ. շերտով, հողի հարթեցում փոցխով մանրացնելով կույտերը, հավաքելով քարերը և արմատները, բնահողի նախապատրաստում ձեռքով սիզամարգի իրականացման համար,
- Սիզամարգերի ցանքս ձեռքով մատուցելով սերմերը, փոցխով խառնելով հողի հետ և հողի վերին շերտի ամրացում ջրով,
- Մակերեսի հարթեցում ճմապատման համար
- Ճմի կտրում, բարձում տեղափոխում,
- Ճմապատում,
- Ծաղկաթմբերի և ծաղկային տարածքների ստեղծում 2-րդ կարգի բնահողում,
- Բահափոր 16-20սմ. խորությամբ շրջերով հողի շերտը, խոշոր կոշտերի մանրացումով,
- Հողի հարթեցում փոցխով մանրացնելով կոշտերը հավաքելով քարերը և արմատները, գծանշում ծաղիկների տնկման համար,
- Փոսերի պատրաստում 0.2մ. տրամագծով և 0.1մ. խորությամբ միամյա և բազմամյա ծաղիկների տնկման համար,
- Մինչև 0.02 խմ. ծաղկասածիլներով արկղերի դատարկում,
- Պալարասոխուկային ծաղկասածիլների տնկում հողագնդով 2-րդ խմբի բնահողում 7 հատ 1քմ. վրա առաջին անգամ ջրելով և 30 հատ 1 քմ. վրա առաջին անգամ ջրելով,
- Վարդակակաչների, թրաշուշանների տնկում փոսիկներում, կամ ակոսներում (80 հատ 192)
- Ծաղկային ձևավորում, /ծաղիկների խնամք/ ռետինե խողովակով ծաղիկների ջրում ոռոգման ցանցից,
- Ջրող ավտոմեքենայով ծաղիկների ջրում,
- Ծաղիկների քաղհան միջին աղտոտվածության դեպքում, փխրեցնելով հողը հողուրագով,
- Մուցում չոր հանքային պարարտանյութերով,
- Ծաղիկների բուծում թունաքիմիկատներով ձեռքի սրսկիչով,
- Չորացած ծաղիկների ցողունների հավաքում և ծաղկանոցից դուրս հանում,
- Ծաղկային գեղարվեստական ձևավորում, կոմպոզիցիաների ստեղծում
- Ծաղկային տարածքների եզրերի ձևավորում մարմարե խճաքարերով,
- Միաշարք կենդանի ցանկապատի ստեղծում և խնամք /խրամուղու փորում, փոցխում, հողի լցում, ջրում,
- Բնաովակների պատրաստում,
- Թաղարային և և գորգային ծաղիկների հանում,
- Վարդակակաչների, կակաչների, սոխուկների հանում,
- Ձևավորում,
- Թփերի տնկման համար հողի փորում, տնկում հողով ամրացնելով արմատները,

-Շառերի տնկում և խնամք /կլոր փոսերի փորում, տնկում, հողագնդով և առանց հողագնդի ամրացնելով արմատները,

-Շառերի տնկման համար նախատեսված ճաղավանդակների, ինչպես նաև բնական և արհեստական նյութերով կոմպոզիցիաների պատրաստում,

Ձեռքով խրամուղների փորում միաշաքք (թփեր) կենդանի ցանկապատ ստեղծելու համար.

-Բնաբաժակների ստեղծում,

-Շառերի և թփերի բնաբաժակների քաղհան փխրեցումով,

-Շառերի և թփերի չորուկներից և կոճղաշվերի կտրում, ձևավորում, երիտասարդացում,

-Գոյացած փայտակույտի բարցում, տեղափոխում, պահեստավորում,

-Կրապատում,

-Շառերի հատում,

-Հատումից առաջացած փայտի մանրացում,

-Շառերի բուժում թունաքիմիկատներով,

-Շառերի ջրում ավտոմեքենայով և ինքնահոս եղանակով,

-Ոռոգման ցանցի և պոմպակայանների ընթացիկ սպասարկում, վերանորոգում և ցանցի անցկացում,

-Ոռոգման ցանցի խողովակների ներկում,

-Նախկինում գոյություն ունեցող չգործող ոռոգման ցանցի առանձին հատվածների վերագործարկում,

-Ձյուն թափ տալ ծառերի ճյուղերից,

-Անցուղիների, հրապարակների, աստիճանավանդակների մաքրում ձյունից :

Սպասարկվող ընդհանուր տարածքը կազմում է 16.0 Ն³ սիզամարգ, 1.2Ն³ ծաղկային տարածք, 7500 Ի³ Ե ,թուփ և այլն:

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համաձայնագրի կնքման օրվանից	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում 2019 թ դեկտեմբերի 25-ը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

7-րդ չափաբաժին

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի կանաչ տարածքների խնամք և պահպանումը`

-Սիզամարգերի մաքրում թափված տերևներից և աղբից – 3.000.000 մ²

-Սիզամարգերի ոռոգում ջրով ավտոմեքենայով – 1800 մ³

-Սիզամարգերի ոռոգում մինչև 40մ երկարությամբ ռետինե խողովակով – 2.500.000 մ²

-Պատահական աղբի հավաքում -4.000.000 մ²

-Սիզամարգերի քաղհան – 120.000 մ²

-Սեզոնի ընթացքում աղբի և մոլախոտի բարձում ավտոմեքենա – 180 տն

-Սեզոնի ընթացքում աղբի և մոլախոտի բեռնաթափում ավտոմեքենաներից -180 տն

-Հանքային պարարտանյութերով համատարած պարարտացում – 32հա

-Կիսաչոր օրգանական պարարտանյութերով համատարած պարարտացում – 5հա

-Հիմքի և բնահողի հանումը 25սմ խորությամբ - 300 մ³

-Կույտերից ձեռքով բուսական հողի ցրում և դզում 15սմ շերտով - 1400 մ²

-Սիզամարգերի ցանք ձեռքով մատուցելով սերմերը, փոցխով խառնելով հողի հետ և հողի վերին շերտի ամրացում ջրով -15000 մ²

-Բահափոր 16-20սմ խորությամբ շրջերով հողի շերտը,

խոշոր կոշտերի մանրացում – 21000 մ²

-Հողի հարթեցում փոցխով, մանրացնելով կոշտերը,

հավաքելով քարերը և արմատները - 21000 մ²

-Փոսերի պատրաստում 0.2մ տրամագծով և 0.1մ խորությամբ և միամյա թաղարային ծաղիկների տնկման համար -120.000 հատ

-Գծանշում գորգային ծաղիկների տնկման համար - 900 մ²

- Պալարասոխուկային ծաղկասածիլների տնկում 2-րդ խմբի բնահողում առաջին անգամ ջրելով – 45000 հատ
- Մինչև 0.02 մ³ ծաղկասածիլներով արկղերի դատարկում – 4500 արկղ
- Մինչև 40մ երկարության ռետինե խողովակով ծաղիկների ջրումը ոռոգման ցանցից – 160.000 մ²
- Զրող ավտոմեքենայով ծաղիկների ջրում – 600մ³
- Ծաղիկների քաղհան միջին աղտոտվածության դեպքում, փխրեցնելով հողը հողուրագով – 50000 մ²
- Ծաղիկների սնուցումը չոր հանքային պարարտանյութերով, այն հողուրագով մտցնելով հողի մեջ – 30000 մ²
- Չորացած ծաղիկների ցողունների հավաքումը և ծաղկանոցից դուրս հանումը -30000 մ²
- Թաղարային և գորգային ծաղիկների հանում 120.000 հատ
- Վարդակակաչների և նարգիսների սոխուկների հանում – 40000հատ
- Ծաղկային ձևավորում -5000 մ²
- Ծաղիկների բուժում թունաքիմիկատով ձեռքի սրկիչով – 480.000 ծաղիկ
- Կաննաների հանում – 300 հատ
- 50x50սմ չափերի վարդերի բնաբաժակների փորում – 4000 հատ
- Վարդերի էտը -10000 հատ
- Վնասված արմատների էտը – 4000 հատ
- Վարդերի թփերի տնկում բնաբաժակներում – 4000 հատ
- Վարդերի թփերի ազատումը բուզիցից -10000 հատ
- Մինչև 40մ երկարության խողովակներով վարդերի թփերի ջրումը - 700 մ²
- Վարդերի թփերի քաղհան - 700 մ²
- Վարդերի թփերի սնուցումը հանքային պարարտանյութերով - 700 մ²
- Կտրած ճյուղերի հավաքում, տեղափոխում մինչև 100մ հեռավորության վրա և կույտավորում – 400 մ²
- Վարդերի բուլկիժ հողի կոնը 0.2-ից բարձր – 10000 հատ
- Խրամուղու փորումը ձեռքով և թփերի տնկումը կենդանի ցանկապատ ստեղծելու նպատակով, բոլոր աշխատանքները խուզելով – 400գծմ
- Կենդանի ցանկապատների խուզում 3 կողմից մկրատով - 1000 մ²
- Թփերի տնկում բնահողում արմատների սիստեմի ծածկում, ամրացում, բնաբաժակների պատրաստում - 400գծմ
- Ինքնահոս եղանակով կենդանի ցանկապատի ոռոգում բնասովակներում – 1000 մ²
- Կենդանի ցանկապատի խուզում ձեռքով - 1000 մ²
- Կենդանի ցանկապատի սնուցում չոր հանքային պարարտանյութերով – 5000 հատ
- Բնասովակների պատրաստում կենդանի ցանկապատի ոռոգման համար - 400գծմ
